

Նկարագրություն

Բաղադրություն

Նշանակություն

Մակերեսի Նախապատրաստում

Շաղախի պատրաստում

Օգտագործում

- Հանքային
- Ջերմամեկուսիչ
- Չայնամեկուսիչ
- Էկոլոգիապես մաքուր և անվտանգ

Գիպս, կրաքար, ցելյուլոզային հավելանյութեր, շաղկապման դանդաղարար:

Նախատեսված է ներքին մակերեսների հարդարման աշխատանքներն ավարտին հասցնելու, տուֆե, բետոնե, ցեմենտավազային, աղյուսե, պեմզաբլոկե և գաջած մակերեսները հարդարելու համար:

- Նախքան քսելը վերացնել հիմքի թույլ հատվածները, լայնացնել ճեղքերը:
- Մաքրել մակերեսը կեղտից, փոշուց, յուղի և ներկի հետքերից:
- Խորհուրդ է տրվում մակերեսը մշակել «ՇԵՆ» ֆիրմայի ակրիլային կոնցենտրատով:
- 4-5 ժամ անց սկսել հարդարման աշխատանքները:

- Մաքուր տարողության մեջ լցնել 11,11-11,25լ ջուր՝ 30կգ չոր շաղախի համար:
- Պատրաստի շաղախը 2-3 րոպե անց կրկին խառնել և օգտագործել:
- Խառնուրդի խտանալուց հետո չի թույլատրվում ջուր ավելացնել: Համասեռ խառնուրդը մակերեսին քսել ծեփիչի կամ մածկաթիակի օգնությամբ:

- Համասեռ խառնուրդը մակերեսին քսել չժանգոտվող ծեփիչի կամ մածկաթիակի օգնությամբ:
- Աշխատանքներն իրականացնել +10°C-ից ոչ ցածր ջերմաստիճանային պայմաններում և օդի հարաբերական խոնավության 75%-ից ոչ բարձր պայմաններում::
- Աշխատանքներն ավարտելուց հետո գործիքները լվանալ ջրով:
- Օգտագործված պարկերը և շաղախի մնացորդներն աղբահանել սահմանված կարգով:
- Գիպսնիտի արագ չորացման համար ապահովել տարածքի օդափոխությունը:

Քսվող մակերեսի ջերմաստիճան	+10°C-ից +30°C
Ջրի քանակ 1կգ չոր շաղախի համար	370 - 375մլ
Ջրի քանակ 30կգ չոր շաղախի համար	11,11-11,25լ
Շերտի հաստություն	1սմ-ից ոչ պակաս
Թաց շաղախի օգտագործման ժամկետ	20 րոպե

Փաթեթավորում

Պահպանում

Անվտանգության կանոններ

Ուշադրություն

Պոլիպրոպիլենային պարկեր՝ 30 կգ զտաքաշով:

Պահպանել չոր միջավայրում և չվնասված պարկերով փայտյա տակդիրների վրա, +40°C-ից ոչ բարձր ջերմաստիճանի և 75%-ից ոչ բարձր օդի խոնավության պայմաններում: Պահպանման ժամկետը՝ փաթեթավորման վրա նշված արտադրման օրվանից 3 ամիս:

- Պահել երեխաների համար անհասանելի վայրում:
- Աշխատանքներն իրականացնել՝ պահպանելով շնչառական օրգանների ապահովությունը:
- Խուսափել մաշկի հետ շփումից:
- Աչքի մեջ ընկնելու դեպքում աչքը լվանալ մաքուր ջրով, անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

- Խառնուրդի խտանալուց հետո չի թույլատրվում ջուր ավելացնել, քանի որ դա կհանգեցնի խառնուրդի կաչողունակության նվազմանը և կնպաստի ճաքերի առաջացմանը:
- Այլ պայմաններում աշխատանքների իրականացման դեպքում վերոնշյալ ցուցիչները կարող են շեղվել:
- Արտադրողը պատասխանատվություն չի կրում աշխատանքների ոչ ճիշտ կատարման դեպքում: դեպքում: